ՇՈՒԼԱՎԵՐ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

(«Նովոյե օբոզրենիայի» թղթակցությունը»)

Ի հավելումն ավազակների հետ դեկտեմբերի 15-ին տեղի ունեցած փոխհրաձգության մասին համառոտ հաղորդագրության, կարող եմ հայտնել հետևյալ հետաքրքիր մանրամասնությունները։ Սեպտեմբերի 15-ի գիշերը Բորչալվի գավառապետը Արուխլո գյուղում դիրքեր գրված որսորդական ջոկատի պետին տեղեկացրել է, որ Ալայ Մուրսակուլովի ավազակախումբը Տաշտիկուլյար գյուղի մոտ կողոպտել է մի գերմանացու ձիասայլ։ Այս լուրն ստանալով, պոդպորուչիկ Օսիպյանցը, 7 զինվորների հետ, դուրս է եկել՝ Խրամի կիրճում ավազակներին փնտրելու։ Առավոտյան 7-ի մոտ պ. Օսիպյանցը Խրամի կիրճից ելնելով, ուղևորվել է դեպի Քոսալար գյուղ։ Հիշյալ գյուղին չհասած շարքայիններից մեկը բլրի գագաթին թամբած ձիեր է նկատել, որի մասին հայտնել է սպային։ Նույն ժամանակ բլրի հետևից կրակոցներ են լսվել, բայց չարագործները չեն երևացել։ Զինվորներն անմիջապես շղթա են կազմել։ Շղթայի տեղը միանգամայն հարթ է եղել։ Ավազակներն ուժեղ կրակ են բացել՝ շղթայի վրա գնդակների կարկուտ տեղալով, ընդ որում աջ ուսից թափանց վիրավորվել է շարքային Բայազիտովը, իսկ երկու ուրիշ զինվորների գլխարկները ծակվել են։

Որսորդները ավազակներին չեն տեսել, այդ պատճառով կրակն ուղղել են նրանց կրակոցներից առաջացած ծխի քուլաների կողմը։

Դրանից հետո, պետի հրամանով ջոկատը երեք միահամուռ համազարկ է տվել և «ուռա» գոռալով նետվել դեպի բլրի կատարը՝ ավազակների դիրքի վրա։ Վերջիններս իրենց դիրքը թողնելով, սկսել են նահանջել։ Այդ ժամանակ պ. Օսիպյանցը բլրի կատարին թողել է երեք զինվոր՝ նրանց հրամայելով հետևել կիրճի ելքին, իսկ ինքը, մյուս երեքի հետ, իջել է կիրճ։ Նույն պահին որսորդները նկատել են կիրճն ի վեր վարգող հեծյալ ավազակներին և նրանց վրա կրակ են բացել, ընդ որում՝ վիրավորել են ավազակներից մեկին այնպես, որ նա ձիուց վայր է ընկել, բայց արագ վեր է կացել ու թաքնվել բլրի հետևը։ Այնուհետև ջոկատի պետը շարքայիններին հավաքել է և սկսել

հետապնդել ավազակներին։ Վերջիններս, նախկին դիրքից մի 700 քայլ հեռանալով, նոր դիրք են գրավել (թմբի կատարին) և հետապնդող որսորդներին դիմավորել ուժեղ կրակով։

Փոխհրաձգությունը շարունակվել է մոտ մեկ ժամ։ Որսորդները սկսել են սողալով մոտենալ ավազակների դիրքին, բայց սրանք նահանջել են ու թաքնվել հսկայական քարերի հետևում։ Սակայն շուտով ավազակների հետքը գտնելով, զինվորները կրկին հետապնդել են նրանց՝ ընդհուպ մինչև Խրամ։ Այստեղ ջոկատն ստիպված կանգ է առել, քանի որ ծարավից և հոգնածությունից զինվորներն ուժասպառ են եղել։ Խրամի ափին, Դագետ-Խաչին գյուղի մի բնակչից ավազակները խլել են երկու ձի և շարժվել դեպի Դարբազ գյուղը։ Նրանք փոխհրաձգության տեղում թողել են երկու հրացան, այծենակաճներ, խուրջիններ, թամք, կաշվի խուրջին՝ նոր սիստեմի փամփուշտներով և շատ այլ իրեր։ Երեկոյան ժամը 4-ի մոտ կազակներն ու չապարները Խրամի կիրճում հասել են ավազակներին՝ Սամգրետ գյուղի դիմաց, սակայն այստեղ ավազակները, ձիերը թողնելով, թաքնվել են անտառում։